

**ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԻԿԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
բարբառ (խոսվածք)**

Ըլում ա, լըլում, մի թաքավոր ա ըլում: Օրից մի օր դա շորերը փոխում ա, իրա քաղքըմը ծպտված ման ա գալի: Մի քշեր էլ տենում ա քաղքի դրադին մի լիս:

Գնում ա, ինչ տենա, տան մեջ մի մարդ ու կնիկ, տունը դափ-դատարկ: Մարդն ա նստում տաբուրետկին՝ կնիկն ա գլուխը դնում մարդու ծնգներին քնում, կնիկն նստում՝ մարդն ա գլուխը դնում կնգա ծնգներին քնում:

Թաքավորը էդ կնգանը մարդու քնած վախտը հարցնում ա. — Ի՞նչ ունես ըստի:

Կնիկն ասում ա. — Բա ի՞նչ անեմ, ընգել եմ՝ քաշում եմ:

— Թաքավորի կնիկ կդառնաս, — ասում ա թաքավորն ու գնում:

Կնիկը քշերը մարդին սպանում ա, ռավողը գնում ա թաքավորի կուշտը, թե սհենց ու սհենց, հմի էլ ուզում եմ թաքուհի դառնամ, չունքի թաքավորի սիրտը թհենց ա ուզում:

Թաքավորը գայրանում ա, դրան սպանիլ ա տալի ու հրամայում, որ ինչքան կնիկ կա սպանեն, մի տմազլըդ չթողան: Շուք ու շիվանն ընգնում ա քաղաքը:

Թաքավորի ջահել նազիրը գնում ա իրանց տունը, հորը պատմում, թե թաքավորը սհենց հրաման տվուց: Դրա հերն էլ մի վախտ թաքավորի հոր նազիրն ա էլած ըլում:

Տղին ասում ա թե. — Հրամայի թող ինչքան կնիկ կա, տապ անեն, տանիցը դուս չգան:

Շատ ա անց կենում, քիչ, թաքավորն սկսում ա մտածիլը, հենց իմանում ա իրա երգրըմը է՛լ կնիկ չկա:

Մի օր էլ թաքավորի նազիրն ասում ա, թե. — Հերս ուզում ա հետդ խոսա:

Թաքավորը շատ ա ուրախանում, որ իրա հոր նազիրը, որ մի անգին մարդ ա, կգա հետը կխոսա, սիրտը մի քիչ կհովանա:

Ասում ա. — Ասեք, թող գա:

Նազիրի հերը գալիս ա, դեսից-դենից խոսում են, ըծում թաքավորի հոր նազիրը մի պատմութիւն ա անում.

— Մի քշեր տունը քնած ի, մին էլ մի ձեն ընգավ անգաձս, «Փահլեվան, հե՛յ, դուս արի»: Ուզում ի կիստ տկլոր դուս գամ, կնիկըս ասավ. — Այ մարդ, զենքերդ վեկալ:

Հլեդ էկա քնեցի: Մը քիչ էդը մին էլ լսեցի. «Փահլեվան, դուս արի»:

Ճարս ինչ, գուրգս վեկալա, զենքերս կապեցի, դուս էկա: Տենամ մի դարիք մարդ ձիուն նստած: Դա թե՛ «իմ եղնա արի»:

Գնում եմ ու կասկածում, որ էդ դարիք մարդը օրանա չուրմը կարող ա ինձ սպանի էլ:

Ճամփի կիսին գուրգս շպրտեցի, որ դրան սըպանեմ: Դա բռնեց, էդ շպրտեց՝ թե հանաք մի անի: Մըքիչ գնալուց էդը գուրգս հլեդ շպրտեցի, դա բռնեց ու ջգրվեց՝ թե հանաք մի անի:

Շատ գնացինք, քիչ, մութ քշեր էր, ինչ տի հսկանեի, հասանք մի մենձ քարափի: Դա ասավ. —

Ըստի քառասուն դներ են ապրում, նրանցից ինաստ ունեմ հանելու, քարափին սեպեր խփի, բրցանամ, գնամ ինաստս հանեմ ու գամ:

Կարացի ոչ սեպերը լիքը խուրջինը իրա ձիու վրիցը վեր բերեմ: Ինքը վեր բերուց, սեպերը ձեռով քարափին խփելեն բրցացավ, ինձ էլ պատվիրեց. — Ես կգնամ, թե մենակ ծուխ բցրանա՝ ես չկամ, ձին՝ քեզ, իսկ եթե ծուխ բցրանա, հետն էլ քարափիցն արին գա՝ ես կամ, ճամփա կպահես:

Մըքիչ եղը ինչ տենամ, մի ծուխ ա բցրացել, մի ծուխ, որ սար ու ձոր լքցրել, հետն էլ արինը
ֆշշալեն, սելավի պես քարափիցը թափվում ա: Ջարմանքից քար կտրեցի: Մին էլ տենամ էդ
դարիք մարթը էկավ, թե Քառասուն դներին սրպանեցի, սիրտս հովացավ, գնանք:
Գնացինք, գնացինք, հասանք մի գերեզմանաքարի, վրեն էրկու հոգու անում: Դա քարը բմբլի
պես բցրացրուց, թուրը սվուց ինձ, դոշը բաց արավ, թե. — Ախպերացու, ինձ սպանի:
Աչքերիս հվատացի ոչ, տեր աստվա՛ծ, էս ինչ բան ա, իսկական կնիկ:
Ասավ. — Բա չես ասիլ, էդ քառասուն դները իմ մարթին սրպանեցին, էս քարի տակը թաղեցի
ու երթվեցի՝ մարթիս ինատը հանեմ ու ինքս էլ գնամ նրա կուշտը:
Էդ ասիլը տեհա, մին էլ բիրդան իրա թուրը կոթի կոնիցը տընգեց գեղնին ու դոշի վրա ընգավ
վրին, մեռավ: Մեռավ, դրան իրա մարթի կողքին թաղեցի, քարը հլեդ տեղը դրի:
Թաքավորի հոր նազիրն էս պատմութիւնը անում ա ու ասում. — Բա՛, թաքավորն ապրած կենա,
սհենց կնիկ էլ ա ըլում:
Թաքավորը ֆոքոց ա քաշում ու ասում. — Ի՞նչ օգուտ, ինչքան կնիկ կար, սրպանեցինք:
— Չէ՛, թաքավորն ապրած կենա, հեչ մի կնիկ էլ սրպանված չի, — ասում ա նազրի հերն ու
պատմում, թե գործը ոնց ա էլել:
Թաքավորը շատ ա ուրախանում:
Երգնքիցը իրեք խնձոր վեր ընգնի: Մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ հավատարիմ
կնգանը: